ՋՐԱՎԱԶԱՆԸ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԸ ՋՐԱՓԻՑ ՀԵՌԱՑՎԵՑԻՆ

Կինո «Նաիրիի» հարևանությամբ, Մոսկովյան և Իսահակյան փողոցների միջև շրջանաձև պուրակի սկզբնամասում տասնամյակներ առաջ կառուցվեց և սկսեց գործել ջրավազանը հարակից «Առագաստներ» անուն ստացած սրճարանով: Նրա շրջապատի բարեկարգմանը անձամբ հսկում էր քաղաքապետ Գրիգոր Հասրաթյանը: Պուրակի սկզբնամասում կանգնած, կաթնագույն ֆելզիտ քարով երեսապատված 4-5 հարկանի շինության ճարտարապետական ձևերը դիտողին մատչելի լինելու նպատակով, Հասրաթյանը պտղատու և դեկորատիվ ծառեր տնկեց, որոնք մեծ չափերի չեն հասնում, իսկ մի քիչ հեռու տնկել տվեց ծառատեսակներ, որոնք ժամանակի ընթացքում դարձան հաստաբուն և սաղարթախիտ:

Շատ չանցած Հասրաթյանի մտահղացումները չիասկացողները պուրակը չհսկեցին, պտղատու և դեկորատիվ ծառերը վերացան, նրանց տեղում և, նույնիսկ բնակելի շինության ճակատից երկու մետրի վրա տնկվեցին լավ աճող ծառեր, այդ թվում հսկա չափեր ընդունող կաղնի ծառեր, որոնց ճյուղերը արդեն պատուհաններից ներս են մտնում:

Այդ ժամանակ ավազանի ողջ պարագծով ստեղծված զբոսուղիների երկայնքով նստարաններ էին տեղակայված, որոնք զբաղեցնում էին ճեմելուց հոգնողները, հատկապես վետերանները: Այստեղ հանգստանալու էին գալիս նաև հեռու թաղամասերից, ճեմում էին համալսարանի երբեմնի ռեկտոր 90¬ամյա Գարեգին Պետրոսյանը, արհիմիութենական երկարամյա գործիչ, նույնպես 90¬ամյա Ենոք Ղազարյանը, ինչպես և կառավարության անդամներ Ալեքսան Կիրակոսյանը իր հասակակիցներով և ուրիշներ: Այստեղ խաղաղ էր, անաղմուկ, հաճելի:

Ժամանակ անցավ, եկան «շուկայական հարաբերությունների» օրեր, ամեն ինչ փոխվեց, փոխվեց նաև մայրաքաղաքի այս խաղաղ անկյունը: Ամենամեծ փոփոխությունն այն էր, որ պուրակը սեփականացվեց «Նուշիկյան եղբայրների» կողմից: Դե սեփականատերերը իրենց իրավունքները լավ գիտեին: Նախ փոքր, կիսահարկ սրճարանը (որ ժողովրդախոսակցական լեզվում հայտնի էր «Поплавок» անվամբ) գրավեց իր առջևի մայթը, սեղաններն ու աթոռները տեղեր գրավեցին ու վերացավ ավազանի շուրջը բոլորակ ճեմելու հնարավորությունը: Հետո սրճարանը դարձավ

երկհարկ, ապա եռահարկ, քառահարկ։ Իր տանիքաձև հորինվածքը փոխառնվեց Գագրիի ճարտարապետների ստեղծագործական տան նույնպիսի տանիքաձևությունից, այն տարբերությամբ, որ այնտեղ դիմացը լայնատարած Սև ծովի ընդարձակ կապույտն էր, այստեղ փոքրիկ ավազան։

Պետք է խոստովանել, որ Նուշիկյան եղբայրները սկզբնական շրջանում լավ էին պահպանում պուրակի ծառ ու ծաղիկը, սակայն հետո ամեն ինչ փոխվեց՝ «լավ» խոսքը դարձավ փոխաբերական, ավազանի բոլոր կողմերում կանաչը ծածկվեց բետոնի սալահատակով, տեղակայվեցին սեղաններ և աթոռներ, ողջ տարածքը նվաճեցին սրճարանները, այդ թվում և ավազանի «կղզյակը»։

Ավազանի եզրագծով տեղակայված վետերանների աթոռները վերացան, որպեսզի սրճարանները դառնան ջրափնյա, զբոսուղիները փոխեցին իրենց բուն նշանակությունը։ Վետերանների համար աթոռներ տեղակայվեցին Մոսկովյան փողոցի հարևանությամբ բաց տարածության վրա՝ ջրից հեռու, փոշուն մոտիկ։ Կիսաալորապտույտ բետոնակերտ նստարանի սրճարանային շրջափակման փորձեր են արվում։

Մի ժամանակ՝ տոնական օրերին, ջրավազանի փոքրիկ կղզյակը տրամադրվում էր հետաքրքրասեր երեխաներին, իսկ հետո՝ նվագախմբերին։ Այժմ այդ կղզյակը ևս օկուպացվել է «թանկ» սրճարանով, իսկ նվագախմբերին հանձնել են Մոսկովյան 8 բնակելի շենքի ճակատամերձ մասը։ Եթե բնակիչները մի կերպ կարողանում էին ջազի շուրջօրյա նվագին դիմանալ, այժմ ենթակա են այդ ամենի բացօթյա իրականացմանը։

Վերջերս «Կոտայք» գարեջուրը մի մեծ մրցույթում շահել էր մեծ մրցանակ, գործարանը ուրախացած փորձեց մի երեկո շնորհանդես կազմակերպել, հարմար համարեց գործակցել «Поплавок»¬ի նվագախմբի հետ։ Որպես էստրադա կամ բեմահարթակ ընտրվեց վերոհիշյալ թիվ 8 շենքի ճակատամերձ տարածքը, առանց դրա համար նախօրոք թույլտվություն և համաձայնություն վերցնելու համապատասխան կազմակերպությունից և ... բնակիչներից։ Շնորհանդեսը աչքի ընկավ իր անթույլատրելի մեծ տևողությամբ և աղմուկի հնարավոր բարձր նոտաներով, համեմված հրթիռային կրակոցներով՝ թիրախ ունենալով բնակելի շենքի պատուհանների միջև առկա նեղ պատերը։ Այդ բոլորը հնարավոր չափով մոտեցված էր «մարտական» վիճակին, որպեսզի բնակիչները զգան ռեալ «պատերազմական» վիճակի պատրանքը, ավելի ճիշտ՝

սարսափը: Այս արարքը, առանց խղճի խայթ զգալու, հնարավոր է նույնացնել խուլիգանության հետ:

Մոսկովյան 8 շենքի բնակիչները պահանջում են Նուշիկյան եղբայրներից, ինչպես և թաղային ոստիկանից նման շնորհանդեսների նվագախմբերը տեղակայել ավազանի արևելյան ծայրում, որը քիչ օգտագործելի է և որի ստորին անստվեր մասում տեղակայված են նստարաններ վետերանների համար:

Բնակելի շենքի ճակատային մասում շուրջ 30 մետրի չափով տարածքը կազմում է բնակելի շինության սեփականությունը. ոտնձգությունները այդ տարածքի նկատմամբ, որ վարձում են զանազան «շնորհանդեսների» համար, զանազան բաց և փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սրճարաններ և այլ կրպակներ տեղադրելու նպատակով՝ անթույլատրելի է: Տնատիրությունը, ինչպես և թաղային ոստիկանը պարտավոր են այստեղ օրինականություն պաշտպանել:

Տիրան Մարության

Ճարտարապետության դոկտոր
Հայաստանի վաստակավոր շինարար
Մոսկովյան 8 շենքի ճարտարապետ,
նույն շենքի 45 տարվա բնակիչ

5 օգոստոսի 2002 թ.